

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
հունիսի 17-ի N 903 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
ապրիլի 30-ի N 718-Ն որոշման

**ՍԱՆԻՏԱՐԱՎՈՒՄԻ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

Ստուգաթերթ N 1.19

Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարում (բաժանմունքում) ներհիվանդանոցային վարակի կանխարգելման և հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպման և իրականացման նկատմամբ վերահսկողության (ՏԳՏԴ ծածկագիր Q 86.10, Q 86.22)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ստորաբաժանման անվանումը,

հեռախոսահամարը, գտնվելու վայրը

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը

ազգանունը, անունը, հայրանունը

ԱԱՏՄ-ի ծառայողի պաշտոնը

ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _____ 20__ թվական _____ ավարտը՝ 20__ թվական _____

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը,

Հ Վ Հ Հ

| | | | | | | | | | |
|--|--|--|--|--|--|--|--|--|--|
| | | | | | | | | | |
|--|--|--|--|--|--|--|--|--|--|

Պետական ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

Տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները

(հեռախոսահամարը)

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ փոխարինող անձի ազգանունը, անունը, հայրանունը

(հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _____ տրված՝ _____ 20____թվական

Ստուգման նպատակը, պարզաբանման ենթակա հարցերի համարները՝ _____

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

| N | Հարց | Պատասխան |
|----|---|----------|
| 1. | Տնտեսավարող սուբյեկտի գործունեությունն սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը | |
| 2. | Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող առանձնացված ստորաբաժանումների անվանումները, գործունեության իրականացման վայրը (հասցեն) և կոնտակտային տվյալները (հեռախոսահամար, կապի այլ միջոցներ) | |
| 3. | Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության տեսակը (ստացիոնար/բաժանմունք) | |
| 4. | Լիցենզիայի տեսակները | |
| 5. | Տնտեսավարող սուբյեկտի աշխատակիցների թիվը | |
| 6. | Տարեկան սպասարկվող պացիենտների միջին թիվը | |

ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարում (բաժանմունքում) ներհիվանդանոցային վարակի կանխարգելման և հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպման և իրականացման սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային նորմերի պահանջների կատարման նկատմամբ իրականացվող ստուգումների

| Հ/Հ | Նորմատիվ իրավական ակտի պահանջը | Հղում նորմատիվ իրավական ակտին | Այո | Ոչ | Զ/Պ | Կշիռ | Ստուգման մեթոդ | Մեկնաբանություն |
|-----|---|---|-----|----|-----|------|----------------|-----------------|
| 1. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարում (բաժանմունքում) չկան նկուղային և կիսանկուղային հարկերում տեղակայված՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 6 | | | | | | |
| 1.1 | հիվանդասենյակներ, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 1.2 | ընդունարան, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 1.3 | միջամտությունների սենյակներ, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 1.4 | վիրակապարաններ: | | | | | 1.0 | Դիտողական | |
| 2. | Իոնիզացնող ճառագայթման աղբյուրների հետ աշխատանքների իրականացմամբ (ռենտգենախտորոշիչ կաբինետ, ճառագայթային թերապիայի բաժանմունք, ռադիոիզոտոպային ախտորոշման լաբորատորիա և այլն) սենքերը տեղակայված չեն հղիների և մանկական հիվանդասենյակներին հարակից (հորիզոնական և ուղղահայաց) տարածքներում: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 7 | | | | 2.0 | Դիտողական | |
| 3. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարի (բաժանմունքի) հիվանդասենյակային բաժանմունքները տարանցիկ չեն: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 8 | | | | 1.0 | Դիտողական | |

| | | | | | | | | |
|-----|---|--|--|--|--|-----|------------------------|--|
| 4. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարի (բաժանմունքի) կառուցվածքն ապահովում է հիվանդների, հղիների, ծննդկանների ու ծննդաբերների տեղակայումը առանձին բաժանմունքներում (ծննդաբերական, հղիների պաթոլոգիայի և գինեկոլոգիական): | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 9 | | | | 1.0 | Դիտողական | |
| 5. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարի (բաժանմունքի) ընդունարանն ապահովված է՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 9 | | | | | | |
| 5.1 | նախասրահ-սպասասրահով, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 5.2 | առաջին բուժօգնության սարքավորումներով հագեցած և գինեկոլոգի բազկաթոռով դիտողական սենյակով (18մ ²), | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 5.4 | բժշկի աշխատասենյակով, | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 5.5 | օժանդակ սենյով՝ կեղտոտ սպիտակեղենի, գույքի պահման համար: | | | | | 1.0 | Դիտողական | |
| 6. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարը (բաժանմունքը) ունի՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 13 | | | | | | |
| 6.1 | մանկաբարձական վիրահատարաններ, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 6.2 | գինեկոլոգիական վիրահատարաններ: | | | | | 1.0 | Դիտողական | |
| 7. | Վիրահատական կառուցահատվածն ապահովված է՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն | | | | | | |

| | | հրամանի հավելվածի կետ 15 | | | | | | |
|-----|--|---|--|--|--|-----|------------------------|--|
| 7.1 | նախավիրահատարանով՝ 15մ ² | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 7.2 | վիրահատարանով՝ 36մ ² | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 7.3 | հիվանդների կենսագործունեության ապահովման համար սարքավորումներով և կահավորումով վերակենդանացման հիվանդասենյակով, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 7.4 | օժանդակ սենքերով՝ պետքանոթների լվացման և ախտահանման, կեղտոտ, մաքուր սպիտակեղենի ժամանակավոր պահման համար: | | | | | 1.0 | Դիտողական | |
| 8. | Մոր և մանկան համատեղ կեցության հիվանդասենյակներում մահճակալները 3-ից ավելի չեն: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 17 | | | | 1.0 | Դիտողական | |
| 9. | Հիվանդասենյակներում ապահովված են հետևյալ մակերեսները՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 18 | | | | | | |
| 9.1 | մեկտեղանոց հիվանդասենյակ՝ 9մ ² , | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 9.2 | մեկտեղանոց հիվանդասենյակ անցախցով և սանհանգույցով՝ 14մ ² (9+3 +2), | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 9.3 | երկտեղանոց հիվանդասենյակ անցախցով և սանհանգույցով՝ 19մ ² (14+3 +2), | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |

| | | | | | | | | |
|------|--|--|--|--|--|-----|------------------------|--|
| 9.4 | մեկից ավելի մահճակալով հիվանդասենյակում 1 մահճակալի մակերեսը՝ 7մ ² , | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 9.5 | մոր և մանկան համատեղ կեցության հիվանդասենյակ անցախցով և սանհանգույցով՝ 18մ ² (9+3 +3+3), | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 9.6 | մոր և մանկան համատեղ կեցության հիվանդասենյակ 2 մահճակալով, անցախցով և սանհանգույցով՝ 26մ ² (14+6 +3+3), | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 9.7 | նորածնային հիվանդասենյակ 2 կյուվեզի համար՝ 12 մ ² , | | | | | 1.0 | g Հատակագիծ | |
| 9.8 | իզոլյատոր նորածնային մահճակալի համար անցախցով՝ 9մ ² , | | | | | 2.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 9.9 | վերակենդանացման հիվանդասենյակ՝ 13մ ² : | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 10. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարը (բաժանմունքը) ապահովված է՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 19 | | | | | | |
| 10.1 | ծննդաբերական կառուցահատվածով, | | | | | 2.0 | Դիտողական | |
| 10.2 | պատվաստումների սենքով, | | | | | 2.0 | Դիտողական | |
| 10.3 | պետքանոթների, մոմլաթների լվացման և վարակազերծման սենքով, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 10.4 | կեղտոտ սպիտակեղենի ժամանակավոր պահման սենքով, | | | | | 2.0 | Դիտողական | |
| 10.5 | մաքուր սպիտակեղենի պահպանման սենքով, | | | | | 1.0 | Դիտողական | |

| | | | | | | | | |
|------|--|--|--|--|--|-----|------------------------|--|
| 10.6 | բոքս-մեկուսարանով՝ կասկածելի կամ հաստատված վարակիչ հիվանդությունների դեպքերի մեկուսացման համար: | | | | | 2.0 | Դիտողական | |
| 11. | Ստացիոնարում ապահովված են սենքերի հետևյալ մակերեսները՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 19, 20 | | | | | | |
| 11.1 | մեկտեղանոց ծնարան՝ 24մ ² , | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 11.2 | երկտեղանոց ծնարան՝ 36մ ² , | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 11.3 | միջամտությունների սենք՝ 12մ ² , | | | | | 2.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 11.4 | վիրակապարան՝ 12մ ² : | | | | | 1.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 12. | Փոքր վիրահատարանում, որտեղ կատարվում են տեղային անզգայացմամբ վիրաբուժական միջամտություններ, ապահովված են հետևյալ սենքերը և մակերեսները՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 21, 22 | | | | | | |
| 12.1 | նախավիրահատարան՝ 8մ ² , | | | | | 2.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 12.2 | վիրահատարան՝ 24մ ² : | | | | | 2.0 | Դիտողական Հատակագիծ | |
| 13. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարը (բաժանմունքը) ապահովված է շուրջօրյա, սառը և տաք ջրով, կենտրոնացված ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 25 | | | | 2.0 | Դիտողական | |

| | | | | | | | | |
|------|--|--|--|--|--|-----|-----------|--|
| 14. | Ջրամատակարարման ցանցից ժամանակացույցով ջուր ստացող ստացիոնարն ապահովված է անհրաժեշտ ծավալով ջրի պահեստավորման ամբարներով, տարողություններով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 25 | | | | 2.0 | Դիտողական | |
| 15. | Լվացարաններն ունեն արմնկային կամ այլ՝ առանց ձեռքի համան կառավարման ծորակներ: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 27 | | | | 1.0 | Դիտողական | |
| 16. | Հիվանդասենյակներում սանհանգույցների բացակայության դեպքում բաժանմունքում կազմակերպվում է սանհանգույց՝ 10 անձին 1 զուգարանակոնքի հաշվարկով և հիգիենայի սենյակ՝ իր շարժական ցնցուղով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 28 | | | | 1.0 | Դիտողական | |
| 17. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարի (բաժանմունքի) սենքերում ապահովված են օպտիմալ միկրոկլիմայական պայմաններ: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 29 | | | | 1.0 | Դիտողական | |
| 18. | Բոլոր հիմնական սենքերում նախատեսված է բնական օդափոխում՝ պատուհանների և օդանցքների միջոցով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 31 | | | | 1.0 | Դիտողական | |
| 19. | Մանրէասպան ուլտրամանուշակագույն ճառագայթիչ սարքերով սենքերն ապահովված են ներհոս-արտաձիգ օդափոխման համակարգով կամ ունեն պատուհանների օդանցքների միջոցով ինտենսիվ օդափոխման հնարավորություն: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 32 | | | | 1.0 | Դիտողական | |
| 20. | Օդի լավորակում իրականացվում է՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 33 | | | | | | |
| 20.1 | նախաձնարանում, | | | | | 1.0 | Դիտողական | |

| | | | | | | | | |
|------|---|--|--|--|--|-----|-----------|--|
| 20.2 | ծնարանում, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 20.3 | նախավիրահատարանում, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 20.4 | վիրահատարանում, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 20.5 | հետվիրահատական, ինտենսիվ թերապիայի հիվանդասենյակներում, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 20.6 | ծծկեր հասակի, անհաս, վնասվածքներով նորածինների հիվանդասենյակներում, կյուվեզներով/ինկուբատորներով նորածնային հիվանդասենյակներում, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 20.7 | փոքր վիրահատարաններում: | | | | | 1.0 | Դիտողական | |
| 21. | Օդի մանրէասպան սարքերով կամ օդի վարակազերծման այլ սարքավորումներով ապահովված են՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 35 | | | | | | |
| 21.1 | վիրահատարանները, | | | | | 2.0 | Դիտողական | |
| 21.2 | ծնարանները, | | | | | 2.0 | Դիտողական | |
| 21.3 | վիրակապարանները, | | | | | 2.0 | Դիտողական | |
| 21.4 | հետվիրահատական հիվանդասենյակները, | | | | | 2.0 | Դիտողական | |
| 21.5 | նորածնային ինտենսիվ թերապիայի հիվանդասենյակները, | | | | | 2.0 | Դիտողական | |
| 22. | Սենքերի խոնավ մաքրման և ախտահանման ենթակա մակերեսները՝ պատերը, առաստաղը, հատակը հարթ են, ամբողջական, ջրաանթափանց: Գույքը, կահույքը և սարքավորումներն ունեն մաքրման համար հարմար տեղակայում: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 38 | | | | 1.0 | Դիտողական | |

| | | | | | | | | |
|------|--|---|--|--|--|-----|--------------|--|
| 23. | Իրականացվում է օդափոխիչ համակարգի, օդի լավորական և մանրէասպան սարքերի աշխատանքի հսկողություն՝ համապատասխան գրանցումներով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 40, 152 | | | | 1.0 | Փաստաթղթային | |
| 24. | Մանրէասպան լամպերի շահագործման ժամանակահատվածը հաշվարկվում է համաձայն տեխնիկական անձնագրերի: Լամպերի աշխատանքի ժամանակը հաշվառվում և գրանցվում է մատյանում: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 151 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| 25. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարը (բաժանմունքը) ապահովված է անհրաժեշտ փափուկ գույքով, այդ թվում՝ սպիտակեղենով: Անկողնային սպիտակեղենը փոխվում է ըստ անհրաժեշտության: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 48 | | | | 1.0 | Դիտողական | |
| 26. | Սպիտակեղենը լվացվում է մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարի լվացքատանը: Լվացքատան մեքենաները մակնշված են ըստ բաժանմունքների: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 49 | | | | 1.0 | Դիտողական | |
| 27. | Հիվանդանոցի կենտրոնացված լվացքատանը յուրաքանչյուր բաժանմունքի սպիտակեղենը լվացվում է առանձին՝ ըստ սահմանված ժամանակացույցի: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 49 | | | | 1.0 | Դիտողական | |
| 28. | Լվացքատունն ունի՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 50 | | | | | | |
| 28.1 | կեղտոտ և մաքուր հոսքերի շփումը բացառող կառուցվածք, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 28.2 | կեղտոտ սպիտակեղենի ընդունման, տեսակավորման սենք, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 28.3 | լվացման արտադրամաս, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 28.4 | չորացման, արդուկման սենք | | | | | 1.0 | Դիտողական | |

| | | | | | | | | |
|------|--|--|--|--|--|-----|-----------|--|
| 28.5 | մաքուր սպիտակեղենի պահման և բացթողման սենք, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 28.6 | լվացող և ախտահանման միջոցների պահեստ, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 28.7 | առանձին օդափոխիչ համակարգ | | | | | 1.0 | Դիտողական | |
| 28.8 | դարակաշարեր՝ մաքուր և կեղտոտ սպիտակեղենի, անկողնային պարագաների պահման համար: | | | | | 1.0 | Դիտողական | |
| 29. | Կենտրոնացված լվացքատան բացակայության դեպքում լվացքը կատարվում է բաժանմունքի առանձնացված տարածքում, ապահովվում է հոսքայնության սկզբունքը՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 51 | | | | | | |
| 29.1 | առկա է «կեղտոտ» սենք՝ օգտագործված սպիտակեղենի տեսակավորման, ախտահանման և լվացման համար, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 29.2 | առկա է «մաքուր» սենք՝ չորացման, արդուկման և պահման համար: | | | | | 1.0 | Դիտողական | |
| 30. | Նորածինների սպիտակեղենի լվացման համար օգտագործվում են միայն նրանց համար թույլատրված լվացող միջոցներ: Սպիտակեղենը տեսակավորվում է ըստ գույնի, տեսակի և աղտոտվածության աստիճանի: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 52 | | | | 1.0 | Դիտողական | |
| 31. | Բաժանմունքներում մաքուր սպիտակեղենը պահվում է այդ նպատակով հատկացված սենքերում: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 53 | | | | 1.0 | Դիտողական | |
| 32. | Բաժանմունքներում օգտագործված սպիտակեղենը հավաքվում է պիտակավորված պոլիէթիլենային պարկերում: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 54 | | | | 1.0 | Դիտողական | |

| | | | | | | | | |
|------|---|--|--|--|--|-----|--------------|--|
| 33. | Արտաթորանքներով, կենսաբանական հեղուկներով կեղտոտված սպիտակեղենն անմիջապես տեղավորվում է պարկերի մեջ և ուղարկվում լվացքատուն: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 54 | | | | 1.0 | Դիտողական | |
| 34. | Արտաթորանքներով, կենսաբանական հեղուկներով կեղտոտված սպիտակեղենը նախքան լվացումն ախտահանվում է: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 54 | | | | 1.0 | Դիտողական | |
| 35. | Լվացված սպիտակեղենը բաժանմունք է տեղափոխվում շրջակա միջավայրից աղտոտումը բացառող, պիտակավորված տարողություններով կամ պարկերով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 56 | | | | 1.0 | Դիտողական | |
| 36. | Աշխատակիցների համար հատկացված են սանիտարակենցաղային սենքեր՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 58 | | | | | | |
| 36.1 | հանդերձարան հագուստի պահարաններով, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 36.2 | սանհանգույց, | | | | | 1.0 | Դիտողական | |
| 36.4 | հանգստի և սննդի ընդունման սենյակ: | | | | | 1.0 | Դիտողական | |
| 37. | Աշխատողներն ապահովված են արտահագուստով, անձնական պաշտպանիչ միջոցներով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 59 | | | | 1.0 | Դիտողական | |
| 38. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարում (բաժանմունքում) սանիտարահակահամաճարակային ռեժիմի պահպանման համար կազմավորված է վարակի հսկողության աշխատանքային խումբ: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 64 | | | | 2.0 | Փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|-----|--|---|--|--|--|-----|-------------------------|--|
| 39. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարը (բաժանմունք) ունի վարակի հսկողության ծրագիր՝ հաստատված տնօրենի/գլխավոր բժշկի կողմից: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 65 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| 40. | Վարակի հսկողության ծրագիրը ներառում է կազմակերպչական, կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների համակարգ, որը հիմնված է համաճարակային ախտորոշման արդյունքների վրա և ուղղված է մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարում (բաժանմունք), ներհիվանդանոցային վարակների առաջացման և տարածման կանխարգելմանը: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 66, 200 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| 41. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարի (բաժանմունք) վարակի հսկողության պատասխանատուն իրականացնում է բուժանձնակազմի շարունակական ուսուցում սույն սանիտարահակահամաճարակային կանոնների հարցերով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 73 | | | | 2.0 | Փաստաթղթային Հարցում | |
| 42. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնար (բաժանմունք) աշխատանքի ընդունվող բուժաշխատողները, ժամանակավորապես ուսումնագործնական պարապմունք անցնող ուսանողները ենթարկվում են բժշկական զննության: Նշում 1 | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 75 | | | | 3.0 | Փաստաթղթային | |
| 43. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարի ընդունարանն ապահովված է մշտական հոսող սառը և տաք ջրով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 102 | | | | 2.0 | Դիտողական | |

| | | | | | | | | |
|-----|---|---|--|--|--|-----|-----------------------------------|--|
| 44. | Ընդունարանն ապահովված է անհրաժեշտ օգտահանված և մանրէազերծ գործիքների երկու տարողությունով՝ «ախտահանված» և «մանրէազերծ» գործիքների համար մակնշումով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 103 | | | | 2.0 | Դիտողական | |
| 45. | Հեշտոցային զննման ժամանակ օգտագործվում են միանվագ օգտագործման օգտահանված ձեռնոցներ: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 105 | | | | 2.0 | Դիտողական | |
| 46. | Մաքրման գույքը պիտակավորված է և օգտագործվում է ըստ նշանակության, որից հետո օգտահանվում և չորացվում է: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 106 | | | | 1.0 | Դիտողական | |
| 47. | Մի քանի նախաձեռնարանների կամ անհատական ձեռարանների առկայության դեպքում դրանք զբաղեցվում են՝ պահպանելով շրջափոխությունը: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 107 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| 48. | Ծննդաբերի տեղափոխումից հետո ապահովվում է նախաձեռնարանի օգտագործված գույքի (մահճակալ, աթոռ, տականոթ) օգտահանումը: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 109 | | | | 2.0 | Դիտողական Հարցում Լաբորատոր | |
| 49. | Ծնարանում անձնակազմը կրում է պաշտպանիչ արտահագուստ, միանվագ օգտագործման օգտահանված զննման ձեռնոցներ: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 110 | | | | 2.0 | Դիտողական | |
| 50. | Ծնարանում մանկաբարձուհին (մանկաբարձ-գինեկոլոգը) կրում են մանրէազերծ խալաթ, անհատական պաշտպանիչ միջոցներ: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 110 | | | | 2.0 | Դիտողական | |

| | | | | | | | | |
|-----|---|---|--|--|--|-----|------------------------|--|
| 51. | Արգանդի խոռոչի գննման ժամանակ օգտագործվում են միայն մանրէազերծ ձեռնոցներ: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 111 | | | | 3.0 | Դիտողական | |
| 52. | Ծննդաբերության ժամանակ աջակցող անձը հագնում է մաքուր/լվացված արտահագուստ, դիմակ, գլխարկ, բախիլ: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 112 | | | | 1.0 | Դիտողական Հարցում | |
| 53. | Ծնունդ ընդունելու ժամանակ օգտագործվում են միայն մանրէազերծ գործիքներ, վիրաբուժական թելեր, վիրախճուճներ, տակաշորեր, լաթեր և այլն: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 113 | | | | 3.0 | Դիտողական | |
| 54. | Պորտալարը կտրելուց առաջ և հետո պորտային վերքը մշակվում է 70° սպիրտով կամ քլորհեքսիդին գլյուկոնատի 0.5%-անոց սպիրտային լուծույթով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 116 | | | | 2.0 | Դիտողական | |
| 55. | Նորածնի աչքերը մշակվում են 1%-անոց տետրացիկլինի կամ 0,5%-անոց էրիթրոմիցինի քսուքներով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 117 | | | | 2.0 | Դիտողական | |
| 56. | Նորածնին կշռելուց, փաթաթելուց, հագցնելուց հետո փաթաթման սեղանը և կշեռքը ախտահանվում են: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 118 | | | | 2.0 | Դիտողական Լաբորատոր | |
| 57. | Ծնվելուց անմիջապես հետո նորածնին մոր կրծքին դնում են նախօրոք տաքացված մանրէազերծ կամ անհատական բարուրաշորով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 114 | | | | 2.0 | Դիտողական | |

| | | | | | | | | |
|-----|---|---|--|--|--|-----|---------------------------|--|
| 58. | Նորածնի առաջնային մշակման համար օգտագործվում է մանրէազերծ լրակազմ: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 115 | | | | 2.0 | Դիտողական Լաբորատոր | |
| 59. | Ընկերքային արյունը և ընկերքը ոչնչացվում են բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներին համապատասխան: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 119 | | | | 2.0 | Դիտողական | |
| 60. | Վիրակապական նյութերը հավաքում են անջրաթափանց տարողության մեջ և ոչնչացվում բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներին համապատասխան: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 120 | | | | 2.0 | Դիտողական | |
| 61. | Ծննդաբերությունից հետո սրահը ենթարկվում է եզրափակիչ մաքրման և փխտահանման: Նշում 2 | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 122 | | | | 3.0 | Դիտողական Փաստաթղթային | |
| 62. | Մոր և մանկան համատեղ կեցության սենյակներն ապահովված են անհրաժեշտ գույքով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 124 | | | | 1.0 | Դիտողական | |
| 63. | Հետծննդյան բաժանմունքի հիվանդասենյակները զբաղեցվում են շրջափոկային, ոչ ավելի, քան 3 օրվա ընթացքում: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 128 | | | | 1.0 | Հարցում | |

| | | | | | | | | |
|-----|--|---|--|--|--|-----|---------------------------|--|
| 64. | Կրճքով կերակրման հակացուցումներ ունեցող նորածիններն ապահովվում են կաթնախառնուրդով, որի տուփի վրա նշվում է բացման ամսաթիվը: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 130 | | | | 2.0 | Դիտողական | |
| 65. | Հիվանդանոցային շիկները լվացվում և ախտահանվում են, իսկ անձնական շիկները լվացվում են յուրաքանչյուր կերակրումից հետո: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 130 | | | | 2.0 | Դիտողական | |
| 66. | Բուժօգնության դիմաժի դուրսգրումից կամ տեղափոխումից հետո հիվանդասենյակը ենթարկվում է եզրափակիչ մաքրման և ախտահանման: Նշում 2 | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 136 | | | | 2.0 | Փաստաթղթային Դիտողական | |
| 67. | Նորածնային ինտենսիվ բուժման և վերակենդանացման բաժանմունքում (հիվանդասենյակում) ինվազիվ գործողություններ կատարելիս անձնակազմն օգտագործում է գլխարկ, դիմակ և մանրէազերծ ձեռնոց: Անձնակազմն ապահովված է կրկնակի խալաթներով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 137 | | | | 2.0 | Դիտողական | |
| 68. | Անձնակազմը յուրաքանչյուր միջամտությունից առաջ և հետո ձեռքերը լվանում և մշակում է ՀՀ առողջապահության նախարարության հետ համաձայնեցված հականեխիչներով՝ համաձայն դրանց ուղեկցող հրահանգների: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 132 | | | | 2.0 | Դիտողական Հարցում | |
| 69. | Նորածնի խնամքի ժամանակ օգտագործվում է մանրէազերծ հիվանդանոցային տակաշոր կամ մաքուր անհատական մանկական հագուստ: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 139 | | | | 2.0 | Փաստաթղթային Դիտողական | |

| | | | | | | | | |
|-----|---|---|--|--|--|-----|----------------------|--|
| 70. | Նորածինների համար օգտագործվում են փոքր փաթեթով և/կամ միանվագ օգտագործման դեղաձևեր: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 141 | | | | 2.0 | Դիտողական | |
| 71. | Վարակային ծանր ախտաբանությունների դեպքում նորածինը տեղափոխվում է համապատասխան մասնագիտացված ստացիոնար ախտորոշման օրը: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 142 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| 72. | Ծնունդ ընդունելուն և տարբեր վիրահատական միջամտություններին մասնակցող բուժաշխատողները ձեռքերը լվանում և մշակում են ՀՀ առողջապահության նախարարության հետ համաձայնեցված հականեխիչներով՝ համաձայն դրանց ուղեկցող հրահանգների: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 146 | | | | 2.0 | Դիտողական Հարցում | |
| 73. | Վիրահատական դաշտի, արտաքին սեռական օրգանների մաշկի և ազդրերի ներսային մակերեսի մաշկի մշակման համար օգտագործվում են յոդոնատ, յոդոպիրոն, քլորհեքսիդինի գլյուկոնատ, յոդի 5%-անոց սպիրտային լուծույթ: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 148 | | | | 2.0 | Դիտողական Հարցում | |
| 74. | Սարքավորումները (մանրէասպան լամպեր, գոլորշային և չոր օդային մանրէազերծիչ սարքեր և այլն) ստուգաչափված են: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 149 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| 75. | Սարքավորումների շահագործումն իրականացվում է միայն հրահանգավորում ստացած անձնակազմի կողմից: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 149 | | | | 2.0 | Փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|-----|---|---|--|--|--|-----|---------------------------|--|
| 76. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում (բաժանմունքներում) իրականացվում են ամիսը 1 անգամ օդի և մակերեսների մանրէաբանական աղտոտվածության լաբորատոր հետազոտություններ, որոնց վերաբերյալ կատարվում են գրառումներ համապատասխան մատյաններում: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 153 | | | | | Փաստաթղթային Լաբորատոր | |
| 77. | Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարի (բաժանմունքի) բոլոր սենքերում կատարվում է ընթացիկ և հիմնական մաքրում: Նշում 2 | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 159 | | | | 1.0 | Փաստաթղթային Դիտողական | |
| 78. | Հիվանդասենյակից հիվանդների դուրս գրվելուց հետո կատարվում է եզրափակիչ ախտահանում: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 160 | | | | 1.0 | Հարցում Փաստաթղթային | |
| 79. | Բաժանմունքներում և հիվանդասենյակներում ընդհանուր և հիմնական մաքրումը կատարվում է 7 օրը մեկ: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 165 | | | | 2.0 | Հարցում Փաստաթղթային | |
| 80. | Հիվանդասենյակները և միջանցքները մաքրելու համար նախատեսված մակնշված մաքրման գույքը (դույլ, լաթ, սպունգ և այլն) ախտահանվում են առանձին: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 166 | | | | 1.0 | Դիտողական Հարցում | |
| 81. | Ներհիվանդանոցային և ներարգանդային վարակի դեպքերը հաշվառվում են առանձին: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 193 | | | | 1.0 | Փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|------|---|--|--|--|--|-----|--------------------------------------|--|
| 82. | Հակահամաճարակային ռեժիմի որակի մանրէաբանական վերահսկողությունն իրականացվում է բուժկանխարգելիչ կազմակերպության մանրէաբանական լաբորատորիայում՝ ամիսը 1 անգամ: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 202, 203 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| 83. | Հակահամաճարակային ռեժիմի որակի մանրէաբանական վերահսկողությունն իրականացվում է այլ մանրէաբանական լաբորատորիայում՝ պայմանագային հիմունքներով: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 204 | | | | 2.0 | Փաստաթղթային | |
| 84. | Ընթացիկ մանրէաբանական հսկողություն իրականացվում է՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 210 | | | | | | |
| 84.1 | ծննդաբերական սրահներում, | | | | | 1.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 84.2 | վիրահատական կառուցահատվածում, | | | | | 1.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 84.3 | վիրակապարաններում, | | | | | 1.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 84.4 | միջամտությունների սենյակում, | | | | | 1.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 84.5 | ինտենսիվ բուժման հիվանդասենյակներում, | | | | | 1.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 84.6 | կենտրոնական մանրէազերծման բաժանմունքում (սրահում), | | | | | 1.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 84.7 | լվացքատանը, | | | | | 1.0 | Փաստաթղթային Հարցում | |

| | | | | | | | | |
|-------|--|---|--|--|--|-----|--------------------------------------|--|
| | | | | | | | Լաբորատոր | |
| 84.8 | ախտորոշիչ կենտրոնում, | | | | | 1.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 84.9 | լաբորատորիաներում, | | | | | 1.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 84.10 | ախտահանման խցիկում, | | | | | 1.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 84.11 | մաքուր սպիտակեղենի պահման սենյակում: | | | | | 1.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 85. | Հետազոտվում են՝ | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 211 | | | | | | |
| 85.1 | օդային միջավայրը, | | | | | 2.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 85.2 | բժշկական գործիքները, կարի և վիրակապական նյութերը, | | | | | 2.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 85.3 | վիրահատական սպիտակեղենը, | | | | | 2.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 85.4 | բուժանձնակազմի ձեռքերը և հագուստը, | | | | | 2.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 85.5 | կրծքի կաթը, խմելու լուծույթները, | | | | | 2.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |

| | | | | | | | | |
|------|---|---|--|--|--|-----|--------------------------------------|--|
| 85.6 | նորաձինների և կանանց խնամքի միջոցները, | | | | | 2.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 85.7 | դեղամիջոցները, | | | | | 2.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 85.8 | արտաքին միջավայրի տարբեր օբյեկտները (առարկաներն ու մակերեսները): | | | | | 2.0 | Փաստաթղթային Հարցում Լաբորատոր | |
| 86. | Նմուշառումն իրականացվում է մեկ մահճակալի հաշվարկով՝ ոչ պակաս 0,5 լվացուկից: | ՀՀ առողջապահության նախարարի 27.03.2009 թվականի N 03-Ն հրամանի հավելվածի կետ 212 | | | | 2.0 | Փաստաթղթային | |

Ծանոթություններ
Նշում 1*

Ց Ա Ն Կ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ, ՈՐՈՆՑՈՒՄ ԶԲԱՂՎԱԾ ԱՆՁԻՆՔ ԵՆԹԱԿԱ ԵՆ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ, ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԻ ՈՒ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| N | Կազմակերպություններ և մասնագիտություններ | Թերապևտի զննում | Մաշկավենե - րաբանի զննում | Հետազոտություններ պալարախտի նկատմամբ | Արյան հետազոտություն՝ սիֆիլիսի, քսուք՝ (քերուկ) սուսանակի նկատմամբ | Հետազոտություն աղիքային վարակիչ հիվանդությունների նկատմամբ (մանրէակրություն) | Հետազոտություններ հելմինթակրության նկատմամբ | Լրացուցիչ հետազոտություններ ատամնաբույժի, քիթ-կոկորդականջի մասնագետի զննում | քիթ-ըմպանի ախտաճին նկատմամբ |
|----|---|--|--|--|--|--|--|---|--|
| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. | 8. | 9. | 10. |
| 5. | Ծննդատների (բաժանմունքների), մանկական հիվանդանոցների (բաժանմունքների), ատամնաբուժական հաստատությունների բուժ աշխատողներ | Աշխատանքի ընդունվելիս, հետագայում՝ տարեկան 2 անգամ | Աշխատանքի ընդունվելիս, հետագայում՝ յուրաքանչյուր 6 ամիսը 1 անգամ | Աշխատանքի ընդունվելիս, հետագայում՝ տարեկան 1 անգամ և ըստ անհրաժեշտության | Աշխատանքի ընդունվելիս, հետազոտությունը՝ սիֆիլիսի նկատմամբ՝ տարեկան 1 անգամ, քսուք՝ սուսանակի նկատմամբ՝ յուրաքանչյուր 6 ամիսը 1 անգամ | Աշխատանքի ընդունվելիս, հետագայում՝ յուրաքանչյուր եռամսյակը 1 անգամ | Աշխատանքի ընդունվելիս, հետագայում՝ յուրաքանչյուր եռամսյակը 1 անգամ | Աշխատանքի ընդունվելիս, հետագայում՝ յուրաքանչյուր կիսամսյակը 1 անգամ | Աշխատանքի ընդունվելիս, հետագայում՝ յուրաքանչյուր եռամսյակը 1 անգամ |

Եջում 2

ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԱՏԱՅԻՆԱՐԻ ՏԱՐԲԵՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ՍԵՆՔԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ ԵՎ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

| Ընդունարան | Ծննդաբերական բաժին | | | Մոր և մանկան համատեղ կեցության բաժանմունք | Ծննդաբերական բաժանմունք |
|---|--|---|--|--|-------------------------|
| | Նախա-ծննդյան հիվանդա-սենյակներ | Ծննդաբերական սրահ, բոքսային տիպի ծննդաբերական կառուցահատված | Օժանդակ սենյեր | | |
| Ընթացիկ մաքրում | | | | | |
| Խոնավ մաքրում՝ օրը 2 անգամից ոչ պակաս լվացող միջոցի օգտագործմամբ, մաքրում ախտահանիչ միջոցի օգտագործմամբ՝ օրը մեկ անգամից ոչ պակաս՝ (հավելված 1, աղյուսակ 1), ապա յուրաքանչյուր մաքրումից հետո օդի վարակազերծում տեխնիկական անձնագիր ունեցող մանրէասպան լամպերի ուլտրամանուշակագույն ճառագայթմամբ, և/կամ խոնավ ախտահանմամբ՝ հեղացրիչ սարքի և/ կամ օզոնատորի միջոցով՝ սենյի 20 րոպե տևողությամբ օդափոխությամբ, և/կամ ներհոս-արտաձիգ | Մեկ ծննդաբերական սրահի առկայության դեպքում, խոնավ մաքրում կատարվում է Հայաստանի Հանրապետությունում առողջապահության նախարարության հետ համաձայնեցված որևէ ախտահանիչ միջոցի օգտագործմամբ՝ յուրաքանչյուր ծննդաբերությունից հետո (հավելված 1, աղյուսակ 1), ապա օդի վարակազերծում՝ տեխնիկական անձնագիր ունեցող մանրէասպան լամպերի ուլտրամանուշակագույն ճառագայթմամբ, հեղացրիչ սարքի և/ կամ օզոնատորի միջոցով, սենյի օդափոխում 20 րոպե տևողությամբ օդափոխությամբ, և/կամ | Խոնավ մաքրում ախտահանիչ միջոցի օգտագործմամբ, օրը 2 անգամից ոչ պակաս | Խոնավ մաքրում օրը 2 անգամից ոչ պակաս, լվացող միջոցի օգտագործմամբ, նորածնի կերակրումից հետո մաքրում են ՀՀ առողջապահության նախարարության հետ համաձայնեցված որևէ ախտահանիչ միջոցի օգտագործմամբ: | Խոնավ մաքրում լվացող միջոցի օգտագործմամբ, նորածնի կերակրումից հետո մաքրում են ՀՀ առողջապահության նախարարության հետ համաձայնեցված որևէ ախտահանիչ միջոցի օգտագործմամբ: | |
| | | | | Յուրաքանչյուր մաքրումից հետո օդը վարակազերծվում է տեխնիկական անձնագիր ունեցող մանրէասպան լամպերի ուլտրամանուշակագույն ճառագայթմամբ, և/կամ խոնավ ախտահանմամբ՝ հեղացրիչ սարքի և/ կամ օզոնատորի միջոցով, սենյի օդափոխություն 20 րոպե տևողությամբ, և/կամ ներհոս-արտաձիգ օդափոխության համակարգի (բակտերիալ ֆիլտրերով) միջոցով: Ախտահանման ժամանակը նշվում է մատյանում: Ապա սենյերում բոլոր առարկաները և մակերեսները սրբում են ջրմուղի ջրով թրջված լաթով և նորից իրականացնում օդի վարակազերծում, ապա սենյերը օդափոխում են 20 րոպե տևողությամբ: | |

| | | | |
|---|--|--|--|
| <p>օդափոխության համակարգի (բակտերիալ ֆիլտրերով) միջոցով: Ախտահանման ժամանակը նշվում է մատյանում: Սենքերի մշակումը կատարվում է՝ պահպանելով «մաքուր» հատվածից դեպի «կեղտոտ» հատված սկզբունքը:</p> | <p>ներհոս-արտաձիգ օդափոխության համակարգի (բակտերիալ ֆիլտրերով) միջոցով: Ախտահանման ժամանակը նշվում է մատյանում: Սենքերի մշակումը կատարվում է՝ պահպանելով «մաքուր» հատվածից դեպի «կեղտոտ» հատված սկզբունքը: Երկու և ավելի ծննդաբերական սրահի առկայության դեպքում (բոքսային տիպի ծննդաբերական կառուցահատված) մաքրում կատարվում է դրանցից յուրաքանչյուրում, յուրաքանչյուրում ծնունդ ընդունելուց հետո:</p> | | |
|---|--|--|--|

Հիմնական մաքրում ախտահանման մեթոդով/եզրափակիչ ախտահանում կատարվում է նույն ձևով ինչ ընթացիկ մաքրման ժամանակ, միայն այս դեպքում սենքերից դուրս է բերվում տեղափոխման ենթակա բոլոր պարագաները և մանրակրկիտ լվացվում, ախտահանվում են (հիվանդասենյակ, պատուհան, դռներ և այլն): Հիմնական/եզրափակիչ ախտահանման ժամանակ օգտագործում են 6% ջրածնի գերօքսիդ՝ H₂ O₂ 0,5 % լվացող հեղուկի հետ: Լվացող հեղուկի փոշին պետք է լինի հիմնային:

| | | | | | |
|----|-------|--|---|---|---|
| 1. | «Այո» | առկա է, համապատասխանում է նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, պահպանված են նորմատիվ իրավական ակտերի պահանջները | V | | |
| 2. | «Ոչ» | բացակայում է, չի համապատասխանում, չի բավարարում նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, առկա են խախտումներ | | V | |
| 3. | «Չ/Պ» | չի պահանջվում, չի վերաբերում | | | V |

Ստուգաթերթը կազմվել է ներքոնշյալ նորմատիվ իրավական ակտի հիման վրա՝

ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի մարտի 27-ի N 03-Ն հրաման:

Տեսչական մարմնի ծառայող՝ _____
(ստորագրություն)

Տնտեսավարող՝ _____ »:
(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ